ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Պատասխանատու Յովհաննես Փիլիպեան

ՕՐԱԳԻՐ ՀԱՄԻՐԴՆԻՈՅ

Նամակքն ուղղելի են առ Ղ. Գ. Պալդազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ՀԱՄԻՐԴՆԻԱՇԱԲԱԹ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1878 ԹԻՒ 1105

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արբայասպանութեան գործը երթալով նամանձաւորներ կ'ունենայ և ասպարէզն երթալով ընդարձակի։ Ընթերցողը դեռ մոռցած չեն Պուսիոյ Կիւլլեմ կայսեր երկու անդամ դաւանութեան մահուանէ ազատիլը։ յետ այնորիկ դեռ շատ ժամանակ չէ Սպանիոյ նորահաստակ թագաւորին վերայ փորձուեցաւ դաւադրութիւն ոգեռալի փորձը առանց յաջողութեան։ Այս անգամ ալ հեռադիրը կը ծանուցանէ թէ՝ Նաբոլի մէջ Իտալիոյ թագաւորին վերայ սպանութեան փորձ եղեր է, առանց նշանակելու արքասպանին ով լինիլը։ Պ. Գայիրոլի առաջին պաշտօնեայն, որ Ն. Վեհափառութեան հետեր, թեթեւակի վիրաւորուեր է։

Վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Բ. Դուռը Եգիպտական սահմանաց ուղղութեան համար իր տանութիւնը տուեր է ըստ նշանագծութեան Երլինու դաշնագրոյն։

Կրետէի համար ևս կ'լսուի թէ Գարաթէոդորի փաշայ ընդհանուր կառավարիչ ընտրուեր է թեալ կղզւոյն, յանձնելով իւրեան ի գործ դնել կրետացւոց շնորհուած նոր սահմանադրութեան վարչութիւնը։

Աֆղանիստանի լուրերը դեռ վճռական ոչինչ չ'յայտներ։ Երկուսանք պատրաստութիւն տեսնին։ Շիր Ալի դէպ ի Թայպէրիի կերճերը յաղթ կ'երթայ ամբոխութիւններ չինել տալու։ Ռուսիոյ տէրութեան սոյն Անկլո—Աֆղանական գործոյն մէջ մասն ունենալն օր աւուր աւելի յայտնուի։ Զէրնայէվ զօրապետը, որ Սերբիոյ առաջին պատերազմին մէջ էր, Աֆղանիստան գիւղեր է, կ'ըսուի, տեղական բանակին մէջ պաշտօն վարելու։

Բուլղարաց խրատումները լաւ նշանակութիւն ունին։ առանց մէջ բաւական ռուս կամաւորներ ևս կան։ Բուլղարաց նպատակն է բուն Բուլղարիոյ հետ միանալով Բուլղարական մէկ տէրութիւն կազմել ըստ դաշանց Ա.յի Օտեֆանոյի։ Ապստամբութիւնն հասած է մինչև ի Մակեդոնիա։ որոնց դէմ զրկուած է Հիւսնի փաշայ 18,000 բէսիֆ զօրք։

Ռուսիոյ կառավարութիւնը ներքին յուզմունքներէ դեռ ազատած չէ։ Զարհուրելի աղատականաց կուսակցութիւն մի կայ որ կարծուածէն աւելի զօրաւոր մարմին մի կը գազմէ։ առանք համակրուած կ'երևին բարեկարգութեան և օրինաւորութեան։ և կառավարութեան բռնած ընթացքից մէջ, ի մասին Դ.Հ.Լ.Ա.Ն.Ի.Ա.Ն.Ի.Ա.Ն.Ի

ԺԶ. Թէ՝ փոխանակութեանց ազատութիւնը, ծովերու և հաղորդակցութեան ճանապարհներն ընդարձակելու ազատութիւնը պէտք են առաւելապէս նպատակ լինել քաղաքակրթեալ տէրութեանց առևտրական քաղաքականութեան.

ԺԷ. Թէ՝ համազգային ատելութիւնները և երկիր գրաւելու փառքը պէտք է ոտնակոխ լինին ուսման, մամլոյ և կրօնական քարոզութեանց միջոցաւ.

ԺԸ. Ժողովը իւր դիւանին կըյանձնէ համազգային Միայուն ժողովակ մի կազմել, որոյ պաշտօնն լինի դաշնակցութիւն մի կազմել բոլոր խաղաղասիրական ընկերութեանց և եկող տարուան համար ժողով (գոնկրէ) մի գումարել:

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ Թուով յիշած էինք, թէ ըստ որոշման Երես. ժողովոյ Քաղաքական ժողովը փութաց Ուսումնական խորհուրդ կազմել, և անկէ զատ հոգաբարձութիւն մի ևս կազմած է, առանց Երես. ժողովոյ որոշմանը: Ուսումնական խորհրդոյ անդամք ընտրուած են հետագայք. Պ. Պ. Մեսրոպ Նուպարեան, Խաչատուր Վարպետեան, Յակոբ տէր Գասպարեան, Գրիգոր Ջիլինկիրեան, Յակոբ Մերկերեան: իսկ հոգաբարձութիւնն յանձնուած է Պ. Պ.ց Տօքտօր Կոստանդեան, Զարեհ Տիլպէրեան, Ստեփան Վարպետեան, Սարգիս Սվազլեան, Զաքի Զաքիեան:

Ըստ մեր կարծեաց, ինչպէս կ՚օրինադրէ և ազգային Սահմանադրութիւնը, գաւառագլուխ եղող քաղաքաց մէջ Ուսումնական խորհրդոյ գոյութիւնը անհրաժեշտ է, թէ՛ նոյն քաղաքին և թէ վիճակային դպրոցաց բարեկարգ տեսչութեան համար. իսկ եթէ խորհուրդը իւր ձեռաց տակ հոգաբարձութեան պէտք մի զգայ, ինքը պիտի ընտրէ ուզած անձինքը իբր օգնական իւրեան ուսումնական շրջանէ դուրս եղած պէտքերը հոգալու համար:

Ընդհակառակը մեր արդի Քաղաքական ժողովը թէ հոգաբարձութեան և թէ Ուսումնական խորհրդոյ համար այնպիսի անձինք կընտրէ որոնք թէ անձնական և թէ ընկերական դրից նկատմամբ համահաւասար կըկշռեն, և յամենայնի համախոհ և գաղափարակից են թէ Պ. Իփէքճեանի և թէ Պ. Մամուրեանի. ուստի Ուսումնական խորհրդոյ անդամք տեսնելով որ հեղինակութիւն մի չպիտի կարենան ունել հոգաբարձութեան վերայ, խմբովին կըհրաժարին. և Քաղաքական ժողովը հակամէտ կըկարծուի Ուսումնական տնօրէնութեամբ մկրտել զհոգաբարձութիւնը, եթէ Պ. Իփէքճեան հակառակ չդնէ իւր Տեղեկագրին, յորում իսպառ բարձած է Ուսումն. խորհրդի պէտքը:

Ա. Մամլոյ յարգոյ խմբագիրը, որ մեծ դեր ունի սոյն ճիզվիտական խաղուն մէջ, իւր Հոկտեմբեր ամսոյ Թիւին մէջ այնպէս ցոյց կուտայ թէ Երես. ժողովոյ մեծամասնութիւնը կարևորութիւն չտալով ոչ Ուսումնական խորհրդոյ և ոչ հոգաբարձութեան կազմութեանը, միայն դրամական խնդիրը որոշելու կողմը հակեր է, ուրեմն ինչ հարկ կար Քաղաքական ժողովոյն Ուսումնական խորհուրդ ընտրել, զոր ինքն Մամուլ բոլորովին լռութեամբ կ՚անցնի, առանց թերևս զգալու թէ ինչ մեծ հակասութեան մէջ կ՚իյնի:

Ստոյգ աղբիւրէ կ՚իմանամք որ, Երես. ժողովոյ որոշումն յարգելով Քաղաքական ժողովը (միշտ արտաքին ազդեցութեան ներքև) այնպիսի անձինք ընտրած է Ուսումնական խորհրդոյ անդամք, որոնք Պ. Իփէքճեանի և Պ. Մամուրեանի թելադրութեամբը առանց ընդդիմութեան իրենց հրամայականին տան, որպէս զի դարձեալ հոգաբարձութիւնը ճանչցուի իբր անօրէն և իրաւասութիւն ունեցող մարմին, և հետևապէս նորընտիր տեսչին ուսմանց ծրագիրը անփոփոխ և առանց նկատողութեան ընդունուի: Մենք մեծ յոյս ունիմք Երեսփ. ժողովոյ մեծ. անդամոց հեռատեսութեան և լրջամիտ դատողութեան վերայ, որ զգալով սոյն անպատեհութիւնը և ազգային մանկունքն ապագային մէջ թէ՛ նիւթական և թէ կրօնական վնասներ ծագելիքը, պիտի փութայ Քաղաքա. ժողովոյ հրաժարեալ երեք անդամոց տեղ ուրիշներ ընտրելէն յետոյ՝ որոշել որ նորէն ընտրուի ոչ հոգաբարձութիւն, այլ Ուսումնական խորհուրդ, այնպիսի անձինքներէ՝ որոց վերայ բոլոր հասարակութիւնը վստահութիւն ունենայ:

ԻԲԳ ՆԻՍՏ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Այսօր կին գումարեցաւ դարձեալ Երեսփոխանական ժողովը: Ատեանը բացուելուն Մամուրեան Մատթէոս էֆէնտին խօսք առնելով՝ դիտողութիւն ըրաւ Արշալուսոյ 1103 և 1104 թիւերուն մէջ սոյն Երես. ժողովոյս մասին գրածներուն դէմ. Յիշեալ էֆէնտին խօսքերը սա իմաստը կըբովանդակէին.—Արշալոյս Արարատեանը ժողովոյ նիստերուն արդիւնքը նկարագրելով թէ՛ իւրեան և թէ Երեսփոխանական ժողովոյն պատուոյն դպած է. բայց առանց համարձակելու պնդել թէ որոնք են սխալներն, բառ որում ժողովոյ բոլոր անդամք ներկայ լինելով երկու նստերուն ալ, գիտէին եղած զրոյցներն և բառ առ բառ միտքերնին պահած էին, այսու ամենայնիւ Մամուրեան էֆ. բոլոր ուժովը կըջանայր համոզել՝ թէ անպատուութիւն է ազգին Արշալուսոյ գրածները, և պէտք է որ ժողովը փութայ հերքել զանոնք լրագրիս միջոցաւ. Յիշեալ էֆ. թերևս թեթևամիտ անձանց տեղ դրած է պատկառելի ժողովոյն պատուարժան և խոհական անդամները, և թերևս տակաւին իւր ձեռաց տակ կայր գործիք մի համարած է զանոնք: Բայց ընդհակառակը նա իւր դիտողութեան պատասխան առաւ ժողովոյ կողմանէ այսպէս.

Պօղոս էֆէնտի Պերկամալեան և Կարապետ էֆ. Շահինեան ասացին թէ, ժողովը այդ օրինակ անպէտ խնդիրներով և վիճաբանութիւններով զբաղեցընել արժան չէ, այլ պէտք է ազգին կենսական և կարևոր խնդիրներու վրայ զբաղիմք և գործ տեսնեմք՝ քան թէ լոկ խօսք մտիկ ընեմք:

Մէկ ուրիշ մի ևս ասաց. եթէ Արշալուսոյ մէջ գրուածները սխալ են, դուք ազատ էք ջրել զանոնք. մեք անոր մէջ ոչ ժողովոյս և ոչ ազգին պատուոյն դէմ գրուած մի տեսանք: Ժողովը սոյն մտաց համաձայն լինելով, կարևորութիւն չտուաւ Մամուրեան էֆէնտիին դիտողութեանը, և խիստ շատերն, ինչպէս նաև մեք, հակառակ դատան նորա ազատ դաղափարացը, որ կերպով մի, ինչպէս ժողովը, նոյնպէս և լրագիրս ճնշման տակ կ՚ուզէ դնել:

Յետ այնորիկ Ազգասիրաց ընկերութեան խնդրոյն գալով, ժողովը որոշեց որ յիշեալ ընկերութեան ազգային սնտուկէն ունեցած 709 լիրայի պահանջքը 600ի իջեցընելով, մշտնջենապէս միայն 8 0/0 տարեկան տոկոս վճարուի, այն թէութեամբ՝ որ եթէ հետևեալ նիստերու մէջ Երես. ժողովը սոյն որոշման հակառակ այլ որոշումներ ընելու լինի, ընկերութիւնը իրաւունք ունենայ ամբողջ գումարը յետս պահանջելոյ: Իսկ Կրօն. և Քաղաք. ժողովոց, ինչպէս և Տնտես. և Դատաս. խորհրդոց մատուցած Տեղեկագիրներուն վերայ առանց երկար վիճաբանելոյ ընդունուեցան. թէպէտև կրօնական ժողովոյ տեղեկագրի մասին դիտողութիւններ ըլլալիք կարևոր կէտեր կային:

Անցեալ երեքշաբթի օր (7 Նոյեմբեր) կրկին գումարեցաւ Երես. ժողովը. և Քաղաք. ժողովոյ հրաժարեալ երկու անդամոց տեղ նոր ընտրութեան ձեռնարկելով՝ բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան Ջիլինկիրեան Գրիգոր և

ծեմ թէ պիտի ընդունիս ասոնք:

Ամառն համեղն,
Ձմեռն ձիւներն,
Աշուն խաչուն,
Գարուն գեղուն,

Անշուշտ առաջին անգամ զարհուրելի վէհ մը հանդիպելով, այս զարհուրական միջարկութիւնը բռուած է, մէհ. ինչպէս մինչև հիմա կանանց լեզուին մէջ կըլսենք: Առաջին անգամ դրախտին մէջ տեսած հրեղէն պահապանին, հուր շուտ տակ, կամ հուր շուտ ակ, ու ետքը հրեշտակ բռուած ըլլալը հաւանական է:

Առաջին մարդուն պզտիկ գերդաստանին պէտք եղած և գործածած լեզուն, իր նշանակող բաներուն հետ անանկ բնաւոր կապ մը ունի, ու խօսուած աստուածադիր կանոնը անանկ բարեկարգեալ է որ՝ ինչպէս վերը ըսինք, մարդուս կանոնին պէտք չունի:

Տակաւին շատ աւելի հաստատուն խօսքեր պիտի գտնայինք հայոց լեզուի առաջնութեանը վրայով, եթէ լեզուին հետ գրականութիւնը՝ի միասին եղած ըլլար, ու այն առաջին լեզուն անկորուստ ու անարատ մինչև հիմայ մեզի բերելու աւանդապահ ըլլար: Բայց այն նորածին ազգին բերանը, որ զանի պահել ոչ հողն էր և ոչ ալ հոգ ընելու պարտաւորութիւն ունէր, ոմն այսպէս և ոմն այնպէս արտաբերելով, դարեր անցնելէն ետև, կամ անզգուշութենէ կամ կլիմային օդոյն զանազանութենէն անշուշտ քիչ կամ շատ փոխուեր չփոթուեր էր, երբ որ մեր երջանիկ հայրերը հասան առջև տուին, ուզեցին ազգին լեզուն գոնէ այն ժամանակին իր գտնուած տեղը կապել, ինչպէս որ կապեցին ալ: Բայց կրնայ մարդ ըսել թէ՝ շատ ուշ լեզուին կործանմանը վրայ հիմն դրին. ինչպէս կըտեսնանք որ շատ կերպ կանոն կայ մեր լեզուի քերականութեանը մէջ, պատճառը լեզուին հնութիւնը ու քերականութեան նորութիւնն է. վասն զի լեզուի սկզբնաւորութենէն գրեթէ 4400 տարի ետքը սկսեր գրականութիւնը. թէպէտև անկէց առաջ կար, բայց շատ անկատար կերպով:

Հին ժամանակի իմաստունները հարկաւորութենէ ստիպելով՝ նախ նշանագիր ու ետքը գիր տալոյ հնարեցին, բայց ինչպէս հին սովորութիւն է, կէտադրութեամբ, միայն քանի մը բաղաձայն, անոնք ալ կերպ կերպ դարձնելով (Հնախօսութիւն Հայաստանի Գ. հատոր, երես 75) ուրիշ ձայն հանել, բառերուն մէջի ձայնաւորները բոլորովին կէտով ըլլալուն՝ շատ անգամ նոյն չորունակ կէտերը գիծ մը ձևացնելով այնպէս գնել վայելուչ տեսած են, (ցուցէ հին սովորութեամբ պատուել ուզելով մինչև հիմայ. Աստուած, Յիսուս Քրիստոս անունները. նաև անոնց պատուելի մարգարէներուն անուանները՝ Աբրաամ, Պատրիարք, Կաթողիկոս, նոյն գծով կըշինեն որ կըսուի պատիւ, որնոր ուրիշ ազգաց մէջ գրեթէ չկայ): Ձայնաւորով սկսած բառերուն տեղը խել մըն ալ նշանագիր չինած էին, ինչպէս հին ձեռագիրներու մէջ կըտեսնանք, որոց մէկ քանին բարեխնամ Մխիթար Աբբահօր քերականութեան մէջ կայ, աշխարհ, արև, երկինք, երկիր, ամենայն. զուցէ այն հին նշանագիրներէն մնացած ըլլայ մեր գիրերուն կերպ կերպ կենդանեաց պատկերով նկարուիլը, ինչպէս հին ձեռագիր մատեաններուն մէջ շատ կըտեսնուին, զոր օտար ազգերը տեսնելով նշանագիր (հիէօկլիֆ) կըկարծեն, ինչպէս Ժան-Պաթիսթ տը Հալտ Ճիզվիթը իրեն կարգի քարոզիչներուն անունով Չինաստանի նկարագրութիւնը կըշինէ, և անոր մէջ կըկարծէ թէ Չինաստանցիք իրենց այբուբենին երկու անուն կուտան Հօ—Թու և Այբէն, ցուցէ այնպէս ըլլայ, բայց ես կըկարծեմ թէ Հայոց փառագիր Այբբենը Չինացոց նշանագիրներուն նմանցունելով կըկարծէ թէ Չինացոց է:

Այս կէտադրութեամբ ձայնաւոր չինելու սովորութիւնը՝ քաղդէացւոց, արաբացւոց, ու եբրայեցւոց հին լեզուներուն մէջ ալ կայ, բայց մերը աւելի առաջ ըլլալով՝ աւելի նուազ կերպը բռնած են. ու ժամանակ անցնելով՝ կամ մասնաւոր պատուոյ համար և կամ անհոգութեամբ, կէտերը զանց առնելով՝ գրեթէ բոլորովին խանգարուեր ու անպիտան բան մը եղած էր. որուն նորոգութեանը սուրբ Մեսրոպ՝ Վռամշապուհ մեր իմաստուն Թագաւորին օգնականութեամբը ձեռնամուխ տանելով, անանկ մէկ կատարեալ կերպով մը բարեկարգեր ու լեզուին ամեն հագագային հնչումը հրաշալի շիներ է, որ մայր լեզու ըլլալով՝ ուրիշ ամեն լեզուներուն ձայնը կըգրէ ու կըհնչէ, ըստ որում Բաբելոնի աշտարակին կործանման ատենը, Աստուած նոր լեզու չստեղծեց, այլ խառնակեց լեզուն, իրենց նախնական հայրենիքէն հեռացողներուն բերանը:

Վռամշապուհէն առաջ մեր ազգի Թագաւորները, որ տէրութեան հետ աւելի կապակցութիւն ունենային, իրենց դիւանները այն լեզուն կըգործածէին, ու այն լեզուն յարգի կըսեպէր. ազգն ալ՝ որ սահմանագլխին մօտ գտնուէին, այն ազգի լեզուն կըխառնէին իրենց լեզուին հետ: Իրաւ որ ցաւելու և ողբալու արժանի բան մը եղած պիտի ըլլայ այն ժամանակը, երբոր մեր աստուածախօս լեզուն՝ օտար գիրերով, մանաւանդ յունաց գրով գրված կըկարդային. մտածէ՛ մէկ հեղ ըսածս, ընթերցող, ու ողբա՛ այն ցաւալի վիճակը լեզուին. եթէ աստուածային պահպանող ձեռքը չըլլար՝ անշուշտ կորսուած պիտի ըլլար մեր լեզուն, ինչպէս շատ հին լեզուներ հիմայ բնաջինջ եղած են:

Կըզարմանաս եթէ ըսես, որ մեր ազգին գլուխն եկած թշուառութիւններուն մէջ, իր լեզուն չխօսելու իր գի-

Մերկերեան Յակոբ էֆէնտիք։ Պարտաւորութիւնը կրստիպէ զմեզ իրր խմբագիր քննութեան ենթարկել մի քանի զեղծմունքներ որոնք տեղի կ'ունենան ժողովոց դիւաններու կողմէ և ուրիշ հանգամանքներու մէջ. ինչպէս այս անգամ եղած է, հրաւիրագրաց մէջ չնշանակելով օրակարգի խնդիրները, որ ըստ այնմ իւրաքանչիւր անգամ կանխաւ գիտնայ և առ այն պատրաստուի, առանձինն նախ քննութեան առնելով առաջարկելի խնդիրները. և յայտնի է որ պատրաստութեամբ գնացողները, որ կերպով մի բարոյապէս զինուած ըսել է, միշտ յաղթանակը կրտանին քուէարկութեանց մէջ, ինչպէս որ փորձը տեսանք։ Առայժմ այսքան։

Ահաւասիկ զօրապետ Լազարէվի թղթակցութեան պատճէնները զոր յիշատակած էինք նախորդ թուով։

Կարս, 31 Օգոս. իրիկուան ժամը 8 բոպէ 25.
Ժենէրալ Լէյբընանտ Լազարէֆեն առ
Միւշիր Իսմայիլ փաշայ։

Երդրումի զինուորական կուսակալը ինձ հաղորդեց որ երէկ գիշեր քանի մը տաճկներ մուտ են Հայու մը բնակարան, զայն կողոպտեր են, մէկ մարդ վիրաւորեր են, և մէկ կին բռնաբարեր են. այսօր ևս թուրք մը վիրաւորեր է Հայ մը, որ ընդդիմախօսեր է նորա քրիստոնէից նը կամամբ բրած սպառնալեաց։ Սարսափահար ժողովուրդը հաղարաւոր բազմութեամբ խըռնուեր են Արքեպիսկոպոսին քով, յայտնելով անոր՝ տաճկաց սպառնալեաց աւելնալը և իրենց անելանելի դրութիւնը։

Առաջարկելով Դոխոլկոյին՝ ձեռք առնուլ ամեն կարելի միջոցներ մինչև մեր զօրաց երդրում մնալու վերջին բոպէն, քաղաքին մէջ կարգ պահելու և ամենուն ընչից ու անձանց ապահովութեան համար, ես կրգ իմմ ձեր բարձր գերազանցութեան չղլանալ ձեր կողմանէ ևս գործադրել ամեն կերպ միջոցներ և ձեր բարոյական ազդեցութիւնը քրիստոնեայ ժողովրդոց պաշտպանութեան և անդորրութեան համար։ Միւշիր, ես բոլորովին հաւատացեր եմ որ դուք կրելով ձեր վրայ ժողովրդեան և զօրաց խորին յարգանքը, և Նորին մեծութեան Սուլթանին ձեզ շնորհած ընդարձակ իրաւասութիւնը և վստահութիւնը, ձեզ համար դիւրին է զսպել մահմետական ամբոխին կրից գրգռումը և քրիստոնէից մէջ կաղմել լիակատար համոզում առարդարութեան ուժը և Օսմանեան պետութեան հայրախնամ հովանաւորութիւնը մանաւորաց և հանուրին համար։

Հայոց ազգին ուղղած հրատարակութեանս մէջ դուք կրտեսնէք թէ ինչ համոզմամբ և ինչ լի հաւատով կընայիմ Օսման. հպատակութեան տակ գտնուած քրիստոնէից ապագայ վիճակին վրայ. վասն որոյ կրհարձակիմ մտածել որ ձեր Բարձր գերազանցութիւնը ուշի ուշով նկատողութեան կ'առնու իմ այս յայտնութիւնները և կրկարեկցի քրիստոնեայ ժողովուրդին։

Խնդրեմ ձեր կարդադրութիւնները ինձ հաղորդելու. շնորհն ընէք, որ ես ալ ներկայացընեմ Նորին Բարձրութեան մեծ դքսին։

Կարս, Սեպտեմբեր 1 կէս օր.

Ժենէրալ Լէյբընանտ Լազարէֆեն առ
Միւշիր Իսմայիլ փաշայ։

Երէկ հեռագրով ձեզմէ խնդրեցի որ դուք միջոցներ ի գործ դնէք քրիստոնէից ընչից և անձանց ապահովութեան համար. այսօր ստացայ հեռագիր Հայոց ժողովրդէն որ խիստ երկիւղի մէջ է, և օսմանեան կառավարութեան պաշտօնէից վրայ հովանաւորութիւն մի չտեսներ, և թէ սաստիկ բռնութիւններ տեսնելով պատրաստ է ինքզինքն ձգել մեր սահմանները։

Արդէն Ալաշկերտէն սկսեր է քրդերու երկիւղէն Հայոց գաղթականութիւնը. անոնց օրինակին կ'սկսին հետևիլ մանաւորապէս և Խորասանի քրիստոնեայք։ Միւշիր, դուք գիտէք որ ես ինքս և նմանապէս թագաւոր կայսեր փոխարքային ստացած տեղեկութեանցս համեմատ աշխատեցի իմ բոլոր բարոյական ազդեցութիւնս բանեցնել Հայոց ազգն իր տեղն պահելու համար. պատուով զիրենք վստահացնելով թէ իրենց համար ամենալաւ պահպանութիւն և երաշխաւորութիւնն է լիակատար հաւատք և տարապայման հնազանդութիւն ունենալ օսմանեան պաշտօնէութեան նկատմամբ։

Միւշիր, ես բոլորովին համոզուած եմ թէ՝ դուք ինձ գաղտարակից էք և անշուշտ առանձին և ազդու միջոցներ ի գործ կրդնէք Հայոց հատարակութեան անդորրութեան համար. ասով դուք վերջ կ'դնէք անոնց յուզեալ վիճակին. և կրհարկադրէք զիրենք տեղերնին նստիլ և խաղաղ իրենց աշխատանաց զբաղիլ։ Հարկ չէ ձեզ հաւատացնել որ իմ մէկ խօսքս՝ այն է «գաղթեցէք մեր սահմանները.» ձեր բոլոր քրիստոնէական գաւառները կամայայնէ. բայց ես հոգւով և սրտով բարեացակամ լինելով Հայոց ազգին, և գիտնալով թէ մեծ բազմութեանց գաղթականութեան վրայ ինչ զբրկանքներ և զոհողութիւններ կրհասնին. և ուստեղանալով հաստատ հրամաններ Նորին Բարձրութեան Մեծ Դքսէն, կրհամոզեմ ձեզ պատուելի Միւշիր, այս գործին հետամուտ լինիք ամենայն եռանդով. ձեզ կ'օրհնեն այն ժողովուրդները, որոնք զօրաւոր և արդար իրաւանց ձեռքին տակ կրգտնեն հանգստութիւն. և ապահովաբար կրշահուին իրենց աշխատանաց պտուղներով. ինչ բրեր էք գաղթականութեան առաջն առնելու համար, խնդրեմ ինձ իմացուցէք։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Կրօնական ժողովոյ Կեդր. վարչութիւն

Վանեցի Քէօսէ Մ. Աւետիսեան Աբրահամ անուն անձին ի Հայրենիս ունեցած կնոջ բողոքանաց վրայ՝ մայրաքաղաքս գտնուող իւր Հայրենակիցներէն ստուգուած է, թէ նա չորս տարիէ ի վեր անյայտ եղած է. ուստի Ազգային Կրօնական Ժողովն յառաջ քան օրէնք տնօրէնութիւն, երկամեայ պայմանաժամաւ որոշեց հրատարակել յազգային լրագիրս թէ ով որ գիտէ ուր լինելը և կամ ինչ գործով զբաղած ըլլալն, իմացուցայ Ազգ. Պատրիարքարանի ի տնօրէնութիւն կարևորին։

Կ Պոլիս, 25 Հոկտ. 1878 (ԿՆԻՔ)

ԲԱՆԱԼԻ ՀԱՅ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Անցեալ օր դրատուն երթալով դրանոցիս վերայ դտայ տետրակ մի, որոյ ճակատը գրուած էր «Բանալի Հայ ընթերցողաց»։ Բացի անմիջապէս և ուշի ուշով կարդացի յառաջաբանը, և ստոյգն խոստովանիմ, մեղադրեցի զբնութիւնը, մեղադրեցի բնութեան դանդաղութիւնը, որ այսպիսի հաղուադիւտ հանճար մի վերջին ժամանակներուս թողուցած է, փոխանակ մեր ազգ. գրականութեան սկզբնաւորութեան ժամանակ ստեղծագործելու, այն դարուն՝ յորում գըտնուած մասնաւոր հանճարներ հաւասքաբար աշխատելով չկարողացան այսպիսի միջոց մի հանճարել լեզու մի ուսնելու համար։

Ո՜հ, որքան ժամանակի կորուստներ եղած են, ըսի ես ինքնիրենս, որքան տաժանելի աշխատութիւններ, մտաւոր ծանր երկեր ու վաստակներ զոհուեր են յումպէտս քերականական արուեստի համար, և չեն կարողացեր բանալին դտնել խեղճ ուսանողները շարադրութեան մէջ ամենադիւրին կերպիս վարժացընելու, զոր հիմայ, հաղար հինգհարիւր տարին յետոյ բարեբաղդութեամբ գտած է Գ. Մ. Մամուրեան։ Յառաջաբան տեղեկութիւնները կարդալ վերջացընելէս յետոյ, բանալւոյն գործածութեան կերպը իմանալ ուզելով՝ տետրակը թղթատեցի, բայց չկարողացայ բոլոր իմ հայկաբանական ոյժս և գրականական տաղանդացս օգնութիւնը մէկտեղ բերելով, բանալւոյն զօրութեանը խելք հասցընել։ Անմիջապէս փակեցի, խմբագրական միւս աշխատութեանցս պարապելու համար. և ուրիշ ժամանակի թողլով հասուն խորհրդածութիւն մը ընելու անոր վերայ։

Յիշեալ բանալին, որ անշուշտ հայկական թէ սումեականները իրենց յատուկ կանոն ունենան, գիտնական բաները գրաբառ, հասարակ բաները աշխարհաբառ գրելով, ան տեսեն գուցէ ազգը կրզգուշացընեն Հայու լեզուին մէջ օտար լեզու խառնելէն։

Գ. Կ.

Լ-Ա-Մ Ա՜Ր Ի՜ 1104 Բ-Ա-Ե-Ջ-Ա-Ն

Խնամով դպիլ քեզ լուծողիդ պատուէր տաս,
Զի բ'երկու տառդ հանեմ, մի սեւ աղտ կը դառնաս.
Այդ սեւ աղտն է կարծեմ ՄՈՒՐ հայոց լեզուին մէջ։
Այլ որ՞ք են տառքդ միւս — պահանջես զայն ի մեջ.
—Դորա են մեն եւ այբ, որք կազմեն ՄԱ վանկը,
Թէ զուգին ՄԱ եւ ՄՈՒՐ, կազմեն բոյս ծուրց տակը։
Թէ հաւասար կիսեմ քեզ, առջի կեսդ է մեծ մայր,
Իսկ միւս կեսդ ալ է մի մակբայ՝ նշանող վայր։
—Այդ մեծ մօր մի բառն է կարծեմ ՄԱՄ այեւոր,
Եւ մակբայդ այդ յիշեալ ի հարկէ է բառդ ՈՒՐ,
Կամիս զի կտրեմ քոյդ գլուխ ծուռ մանգաղ զերբ,
—Մեն տառն է գլուխդ՝ զոր երբ կտրեմ մարմնեդ,
Կը մնաս բրտուրիւն ցցուցող բառն ԱՄՈՒՐ։
Երկու տառքն առջեւիդ հրամայես դնել ետիդ,
—Այբ, մեն տառքդ են՝ զորս երբ դնեմ ՄՈՒՐ մարմնիդ
Կը յայտնես քոյդ արուեստ, զի ասես թէ ՄՈՒՐԱՄ։
Այդ երբ ամփոփեմ քոյդ տառեր ցիրուցան,
Կ'ունենամ աջիս տակ ջրոյ խուռ, կամ ՄԱՄՈՒՐ։
Պակայն բառդ այդ կազմի տառովն ՌԱ — ՄԱՄՈՒՌ
Այլ չէ փոյթ, զի ռա, բե, ի լեզու հայկական
Անխտիր, մերթ ընդ մերթ իրերաց դեր խաղան։

Ց. Բաբէյեան

ը չկարդալու համար ալ հալածանք եղած է(1)։ Արդարև զարմանալի է որ այսքան հին լեզուն՝ թշնամիներուն ալ հալածանքին տակը, օտարականներուն անանկ գիրերովը որ մեր հոգւոյն չիրնար արտայայտել, թէ և քիչ կամ շատ իր առաջին չքեղութիւնը խանգարեց, սակայն մեր ազգի հայրենասէր պաշտպաններուն խնամքովը լեզուին բովանդակութիւնը անկորուստ մնացեր է։ Բայց մնացէ՛, սիրելի ընթերցող, ու մի՛ զարմանար, վասնզի Հայոց անդրանիկ լեզուն՝ իրրև անդրանիկ զաւակի լեզու, կըպահէ կըսրահպանէ Աստուած, և պիտի պահէ մինչև յաւիտեան. այս լեզուի սկիզբը Աստուծմէ ըլլալով՝ վերջն ալ պէտք է որ առ Աստուած դարձի, այսինքն յաւիտենական երջանկութեան մէջ. զրախտէն ելաւ, զրախտը պիտի վերադառնայ։

Վերը ըսինք թէ կամ անգամ թէ, կամ կլիմայէն և կամ դրացի ժողովուրդներէն շատ կերպ փոփոխութիւն առեր է լեզուն, և սկսեր է երկու կերպ լեզուի բաժնուիլ, խրթին ու պարզ, խրթինի օրինակ՝ Մովսէս Խորենացիին չինած Պիտոյիցը, և պարզին՝ նոյն Խորենացիին Հայոց պատմութիւնը, ինչպէս ինքը կըգրուցէ (գիրք Դ. Կլ. ա)։ Թէ որ ազգին գիտնականները հոգ չըտանին, ուրիշ նոր լեզուի բաժանում մըն ալ կըզուշակուի։

Ինչպէս հին լեզուին կանոնը շատ ուշ գրուելով՝ շատ պնդանքներ հիմայ մեզի կանոն եղած են, ասանկ ալ կըվախցուի թէ ազգին ցրուած ու ասանդական գաղթականութեան ժամանակի լեզուն որ գրեթէ հին լեզուէն շատ տարբեր է, որ ըստ օրէ աւելի կըխանգարուի. ինչու որ հիմակուան հայազգի գիտունները անոր վրայ անոգ եղած են. կամ առաջին գրաբառ լեզուին պատուոյն համար՝ աշխարհաբառ լեզուին չեն ուզեր որ կանոն մը դնեն։ Աստեն պիտի ըլլայ որ ազգին գիտունները ստիպուելու են, աւելի չխանգարելու համար, նոր լեզուին կարգ կանոն դնել։ Բայց ալ աւելի խանգարուած ժամանակին հանդիպելով՝ երկրորդ աւերակի մը վրայ հիմն պիտ'որ դնեն. և հիմակուան անոգութեանը վրայ ցաւելու են, որ գրաբառ լեզուին պահպանութեանը համար աշխարհաբառը անկանոն թողեր են. ու նոյն աշխարհաբառէն մէկմէկէ տարբեր գիրքեր շինելով՝ լռութեամբ անոր գործածութիւնը կընդունին։

Շատ կըփափագէի որ գոնէ այսուհետև չուշացընեն, աշխարհաբառին ալ կարգ կանոն մը դնելու, կրնամ ըսել թէ աշխարհաբառին կանոնը՝ գրաբառը չխափաներ, ինչպէս կըկարծուի, ըստ որում բարձրագոյն գիտութեանց վերաբերեալ բաները՝ աշխարհաբառով այնքան դիւրին չէ իմացնել քան թէ գրաբառով. ուստի հարկաւ գրաբառը անխափան գործածուելու է զոր պէտք չէ հելլենականին տեղը դնել, ինչու որ ասիկա գրեթէ մեռած լեզու մըն է։ Եթէ աշխարհաբառը կանոնի տակ մտնելով կրնայ քան զգրաբառն յառաջադէմ ըլլալ, գոնէ հիմակուան խանգարուածին վրայ թող ըլլայ, վասն զի հիմակուան չինուած աշխարհաբառ գրքերուն նայելով՝ կերևի թէ մտքէս անցածը ըլլալու է. բայց պէտք է որ գիտութեամբ ըլլայ, ինչու որ գիտութեամբ ու կանոնով աշխարհաբառ լեզուն գրողը՝ կարելի է թէ աշխարհաբառ չգտնուած բառը գրաբառ դնելով հետզհետէ գրաբառին կըմօտիկնայ։ Պակայն ասանկ առանց կանոնի գնացողը միշտ կըսխալի, ծուռ կողմը կըշակի և աւելի խանգարմունքին կերթայ։

Եթէ աշխարհաբառին կանոն դրուելու ըլլայ և ուսումնականները իրենց յատուկ կանոն ունենան, գիտնական բաները գրաբառ, հասարակ բաները աշխարհաբառ գրելով, ան տեսեն գուցէ ազգը կրզգուշացընեն Հայու լեզուին մէջ օտար լեզու խառնելէն։

(1) Տես թէ մարդկային նախանձը ինչ աստիճան հասեր է որ հաւատոյ եւ իշխանութեան հալածանքեն 'ի զատ, լեզուին անգամ հալածանք եղեր է, միթէ կենակցելու, ուտելու, հագնելու եւ ուրիշ ասանկ սնոտի բաներու համար ալ հալածում ջիմար մի։

հին և թէ նոր գրականութեան դռները բանալու զօրութիւնն ունի. յուզարկուած է հարկաւ և ի Կ. Պոլիս առ Ժողովն վարժապետական կրսպասեմք նորա կարծիքն իմանալու. Ըստ մեր տկար կարծեաց՝ սոյն բանալին նոր շահու դուռ մի պիտի բանայ յարգոյ շարադրողին դիմացը, ուստի կըփութամք ծնողաց աչքալոյս մաղթել։ Գինը 50 սանթիմ է։

ՄԱՀԱԴՈՑԺ

Հալէպլեան ազնիւ ընտանիքն անցեալ շաբթու իւր մէկ անդամը մահուան զոհ տուաւ, այն է Յովհաննէս էֆէնտին։ Յիշեալ բարեպաշտ և ուսումնական անձը իւր առանձնակեցութեան մէջ բոլորջանքը երկու ազիկ զաւակաց դաստիարակութեան տուած էր. ինքը որ քաջ տաճկագէտ էր և նամակագրութեան պաշտօն կը վարէր երևելի վաճառականաց մօտ, այնպէս վարժեցուցած էր և իւր մեծ դուստրը օրիորդ Մարիամը, որ հիմա կարող է հօրը պաշտօնը վարել, ինչպէս և արդէն նորա կենդանութեանը կըվարէր ամենայն յաջողութեամբ։ Մտադիր է նա առաւել ևս ընդարձակել իւր պաշտօնին շրջանը՝ որչափ որ կրներէ իւր սեռին յատկացեալ փափուկ վիճակը։

Ամսոյս 9ին ուրիշ անձի մի կորուստը ի սուգ համակեցուց քաղաքիս հասարակութիւնը։ Պարծանքեան։ Թագւոր էֆէնտին, որ երկար ժամանակէ հետէ ցաւագարութեամբ կ'ապրէր, վերջին օրերս սաստկանալով իւր ցաւը, հինգշաբթի առաւօտ առաւստուած փոխեցաւ ի խոր կսկիծ իւր ամուսնոյն և բաղմաթիւ զաւակաց։ Թագւոր էֆէնտին, ընտիր վաճառականը, այնպիսի անձերէն մին էր որ կրսիրէր գործել քան թէ խօսիլ. բաւական ժամանակ ազգային գործոց մէջ գտնուած է, և ժամանակ մի ևս թէմ Եէիզի հուգուգի անդամէր ազգին կողմէ։ Իւր հեղ և բարեպաշտ վարքով ամենուն սիրելի եղած էր։ Որչափ և կսկծալի է այսպիսեաց տաբաժամ մահը, նոյնչափ ալ մխիթարութիւն է երբ նոցա զաւակունքը իրենց հօրը շաւղացը կը հետևին. այսպէս հանգուցելոյն երկու մեծ որդիքը յոյս կուտան իրենց հօր բարեմասնութեանց ժառանգ լինել։

Թուղարկաւորութեան հանդէսը, որու կ'ընկերակցէին ոստիկանութեան կողմէ դրկուած 24 զինուորք և բաղմաթիւ հայ և եւրոպայի յուղարկաւորք, մեծ շքով կատարեցաւ, և թաղման հանդէսը երկրորդ աւուր առաւօտուն զկնի սուրբ Պատարագին տեղի ունեցաւ։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա, 11 Նոյեմբեր

Անցեալ շաբթու թլփատութեան հանդէս մի կատարեցաւ բաւական շքեղութեամբ։ Թլփատելի մանկունքն էին քաղաքիս մէջ գտնուող դաղթականաց տղայքը, որոց թիւը կը հասնէր 216ի։ Կառավարութիւնը ցանկալով շքեղութիւն տալ սոյն հանդիսին ի մխիթարութիւն իրենց ծնողաց, կանխաւ յանձնաժողով մի կազմած էր հարկաւոր ծախուց համար նպաստ ժողովելու։ Նախ ինքն վսե. Համոի փաշան 10 հատ քայմէ թուղթ շնորհեց, որոյ հետևելով նոյն ժողովոյ մէջ գտնուող անձինք ալ իւրաքանչիւր մէն մի դրամական նպաստ պարգևեցին. անդ ներկայ գտնուելով վսեմաշուք մահտեսի Յակոբ էֆէնտի Սրբարդաբեան, խոստացաւ տղայոց իւրաքանչիւրին մէն մի ձեռք հագուստ շինել. ասոր վերայ Ն. վսեմ. Վալի փաշան և առաջակայ անձինք իրենց շնորհակալութիւնը յայտնելով երկար կեանք մաղթեցին առատաբիրտ էֆէնտիին։

Ամսոյս 1ին ոկիզբն եղաւ հանդիսին. տղայք բոլոր բաղնիք տարուելով և յետ լուացման նոր հագուստներով զարդարուած վսեմաշուք Յակոբ էֆէնտիին ֆրխանէին առջևէն անցուցին հանդերձ տեղայի և եւրոպական երաժշտաց խըմբոով, և տղայքը կայնեցընելով և չէխին մէկը բարեմաղթութիւններ ընելով վասն կենաց յիշեալ էֆէնտիին, միարերան ամէն պօռացին մի քանի անգամ կրկնելով, և ինքն էֆէնտին ֆրխանէին դուռը երևալով իւր շնորհակալութիւնը յայտնեց։ Հետևեալ օրը տեղի ունեցաւ թլփատութեան արարողութիւնը ուրախութեան հանդէսներով և նոյն երեկոյին վսեմ. Վալի փաշան հացկերոյթ մի տուաւ, անձամբ պատուասիրելով զհրաւիրեալները, որոնք էին հիւպատոսարանաց անդամք մեծ մասամբ, նշանաւոր եւրոպացիք, կառավարութեան ժողովոց անդամներն, ազգայնութեան երևելիներն և մի քանի կանայք եւրոպացի։ Սոյն օրուան ծախսերը Ն. Վսեմութիւն Վալի փաշան ըրած է կ'ըսուի։

—Ամսոյս 3ին առանձնակեաց յոյն ծեր մի իւր տանը մէջ հինգ վեցօրեայ մեռած գտնուեցաւ։ Յիշեալ անձը իւր ունեցած տունը յունաց հիւանդանոցին կտակելով՝ շնորհուած է եղեր իւրեան հոն երթալ կերակրուիլ։ Ուստի դիտելով նորա քանի մի աւուր հետէ չերևիլը, տան դուռը կոտրելով ներս կըմտնեն և քայքայեալ վիճակի մէջ կըգտնեն յիշեալ ծերին մարմինը։

—Թիրէի Յունաց եկեղեցին քանի մի շաբաթ յառաջ գողեր մտնելով կողոպտած էին եկեղեցական զարդերը, հիմակ կըլսեմք որ տեղւոյն դայմագամին աշխատիրջ ջանիւքը գողերը գտնուեր ու կառավարութեան յանձնուեր են։

Յիշեալ քաղքին մօտ հողատիրոջ մի ախոռներէն ձիեր գողցող հինգ Չերքէզներ բռնուելով քաղաքին մէջ բանտարկուեր են։ Ասոնց ընկերներէն մին ալ ձիուն տիրոջը հետ կռուած ժամանակ հրացանով սպանուեր է։

—Քաղաքիս Չէյթուն ըրէլը կոչուած շուկայն, որոյ խանութպանք գրիչ բացառութեամբ հայազգիք են, խիստ անսանելի դրութեան մէջ կըգտնուի ի պատճառս անցուդարձից թէ բեռնաւորեալ ուղտերու և թէ բեռնաբարձ սայլերու, և կրնամք ըսել թէ առևտրին զդալի կերպիւ արգելք եղած են, քստորումշուկային անձկութեան հակառակ առաւօտէն մինչև երեկոյ և ոչ պահ մի կըգտնուի առանց սայլի կամ ուղտի։ Տեղական կառավարութեան ուշադրութիւնը կըհրաւիրեմք սոյն անպատեհ և վնասաբեր զանցառութեան։

—Ուրախ սրտիւ կ'իմանամք, որ վեհ. Սուլթանը իւր անձնական թիկնապահներէն՝ արտաքին գործոց պաշտօնատան յիշատակագրաց դիւանին տնօրէն Զայեան ազնուաշուք Էլիաս էֆէնտիին չորրորդ կարգի Օսմանիէ շնորհեր է։

Նոյնպէս նախորդ Մեծ—Եպարգոս Լտհէմ փաշային որդւոյն Ղալիպ—Պէյին երկրորդ կարգի Մէճիտիէ։

Նաև կէօչէեան Գրիգոր էֆէնտիին երկրորդ կարգի պաշտօնատարութեան. իսկ Քէնան Պէյին, Տիւզեան Լտկար Պէյին, Արիսթարքի Եօրկի Պէյին, Բանճիրի Սալոմոն և Վլասթօ էֆէնտիներուն չորրորդ Մէճիտիէ շնորհեր է։

—Կարնոյ կուսակալ Իսմայիլ փաշան երկու վաշտ զօրք մայրաքաղաքն հասեր է։

—Պոնտոյ գլխաւոր ապստամբապետ հաճի Լոյօ, որոյ գործերուն արձագանք եղան լրագրիք բաւական ժամանակ, Աստրիոյ կողմէ ձերբակալուելով բանտարկեալ կըմնայր սպասելով իւր արժանաւոր պատիժն ընդունելու, այժմ կ'իմանամք թէ տերութիւնը ներում շնորհեր է անյիշաչարութեամբ։

—Լրագրի մէջ Զմիւռնայեցի Հոկտ. 13 թուով գրուած նամակէ մի կ'իմացուի թէ՝ Ալի Շէֆիք Պէյ բացարձակ արտօնութիւն ընդունելով Բ. Դրան կողմէ, Տէրսիմի կողմերը բաւական գործ կըտեսնէ ապստամբ Քիւրտերը ի նեղ լծելով, որոց մեծագոյն մասը անձնատուր եղած են, և չեղողներուն գոյքերը գրաւելով և բնակարաններն այրելով, ստիպած է զանոնք ևս ի հնազանդութիւն բերել։ Հարկաւոր տեղեր զօրանոցներ ևս շինել տալով՝ մի քանի վաշտ զօրք կըբնակեցընէ։

—Սեբաստացի Վարդան անուն անձը, որոյ վերայ կարճ տեղեկութիւն տուած էինք, իւր հայրենիքն հասեր է շղթայակապ և կառավարչին թոյլտուութեամբը կրկին վերադարձեր է ի մայրաքաղաքն։ Դեռ չդարձած, բարձրապատիւ Մեծ—Եպարգոսը, կ'ըսէ Փ—նը լրագիրը, հարցուցեր է Պատրիարքարանի, թէ նորա ի Ն. Պոլիս վերադառնալուն վերայ ինչ կարծիք ունի։ Զը խնդրած է իւր որդին ի դատ մնելոյ համար։ Պատրիարքարանը իւր հաւանութիւնը տուած պիտի լինի։

—Ռուսիոյ տերութիւնը այնպիսի քաղաքականութեան կըհետևի, որոյ գաղտնիքն իրեն միայն վերապահած է։ Մինչդեռ ի պատասխանի Գաղղիոյ դորձոց պաշտօնեայ Պ. Վագինկթընի ծանուցագրին, կ'ըսէ թէ կայսրը Բերլինի դաշնագիրը կէտ առ կէտ պիտի գործադրէ. միւս կողմէն ամենևին տրամադիր չերևիր Ռումէլիէն և Կ. Պոլսոյ շրջականերէն իւր զօրքերը քաշել, այլ ընդհակառակը անոնց թիւը կըշատցընէ, և մօտերս ալ Ադրիանուպոլսոյ մօտ իւր բանակը կըկեդրոնացընէ։

—Լրագիրք կըծանուցանեն թէ՝ օսմանեան խորհրդարանը առաջի Մարտ ամսոյն պիտի բացուի, և ընտրութիւնք ըստ հին հրահանգի պիտի կատարուին։ Ըստ ոմանց ևս ետ պիտի մնայ։

—Ս. Բէդրսբուրգէն նամակ մը ոտացանք հոկ. 31 ամսաթուով, յորում ուրախութեամբ սրտի կը ծանուցանէ մեզ մեծահամբաւ Պատկանեան ծերունազարդ Տէր Գաբրիէլ արժ. քահանայի կրկին իւր քահանայութեան պաշտօնին կոչուիլը որ յամէ 1853 մինչև ցայսօր արդիւնաւոր էր ի կողմանէ Ռուսաց Վեհ. Կայսեր։

Սոյն թոյլտուութիւնը տեղի ունեցեր է ի շնորհս վեհափառ Կաթողիկոսի, Կ. Պոլսոյ ամեն. Սրբազան Պատրիարքի և բարեխօսութեամբ գերխորէն եպիսկոպոսի Նոր Պէյ, ինչպէս կըծանուցանէ նամակագիրը։

—Իտալիոյ Հումբերթ թագաւորին վերայ յարձակող եղեռնագործը Բեսսանդէ, կըկոչուի արհեստիւ խոհակեր, և ըստ իւր խոստովանութեան և ոչ մէկ ընկերութեան կըվերաբերի։

—Անգղիական զօրաբաժինք Աֆղանիստան մտեր և Գաֆքլու ու Քափաթիանկա կոչուած բերդերը գրաւեր են։

—Ռուսաց Քոֆման զօրապետը Լմիրին սուր մի ղրկած է ի Քապուլ հանդերձ նամակաւ մի, յորում կ'ըսէ թէ Ռուսիոյ բարեկամք բնաւ պէտք չէ վախնան։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիոն. վերջին տասնև հինգ աւուր մէջ գիներն հաստատ մնացին և դէպ ի բարձրանալու հակամէտ։ Սոյն շրջանիս մէջ ընդ ամենը 436 կողով վաճառեցաւ։ Հին և նոր Գառահիսարինը 124—126. իսկ Էէրլէ ըսուած տեսակը որ անցեալ շաբթու 5 կողով 125ի ծախուած էր, այս շաբթուս 12 կողով ծախուեցաւ 130 ղուրուշի չէքին։

Բամպակ. գործողութիւնք բաւական յաջող դնացին 500 հակ մեքենայի ապրանք վաճառեցաւ 345—355 ղուրուշ ըստ տեսակին։

Փալամուտ. վերջին մէկ քանի աւուր մէջ 2500 կենդինար ծախուեցաւ Անգղիոյ և Նադիրէլ ըսուած տեսակէն 104—117 ղուրուշի, և 60 կենդինար մէջցրանա 150 ղուրուշի։

ՓԱՆՈՒՅՈՒՄ

Դիւրավարժ կերպիւ Ա.ցգղիերէնի Յունարէնի նաեւ ուրիշ ուսմանց եւ երաժշտութեան փափաքողներն, Թապախանեի փողոցը, մեծ. Տավուտեան Թագորիին տունը թիւ 13 կամ գիշերը ժամը 7ին կրնան դիմել։

Տնօրէն

ԱՆԹՈՆ Ա. ՀԷՐՄՈՆ

Տէր լրագրոյս,

Պ.—ի Գ. Պալէ-ալրեան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ